

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼՔՈՆՑԱՆ ԱՐՄԻՆԵ ՄՈՒՇԵՂԻ

**ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ «ՆԵՐՔՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ
ԱՍՏՈՒԱԾՐՆԿԱԼ» ԵՐԿԸ ԵՎ ԴՐԱ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(պատմագիտական և աստվածաբանական վերլուծություն)**

**ԻԵ.00.01 «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Է.-Մ. Ս. Շիրինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Ս. Արևշատյան

Պատմական գիտությունների թեկնածու
Կ. Ռ. Մելիքյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 14-ին, ժամը 14⁰⁰-ին ԵՊՀ-ում
գործող ՀՀ ԲՈՀ-ի Աստվածաբանության 068 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014 թ. հունիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

 Ս. Յ. Բալյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան հայ մատենագրության մեջ կան հեղինակներ և ստեղծագործություններ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն հայ աստվածաբանական, փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Այդպիսի հեղինակներից է Դավիթ Անհաղթը և ստեղծագործություններից նրա «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը:

Դավիթ Անհաղթը, հիրավի, համարվում է միջնադարյան Հայաստանի գիտության հիմնասյուններից մեկը: Առաքել Սյունեցին (XIV-XV դդ.) Դավիթ Անհաղթին համեմատում է Մովսես մարգարեի հետ՝ որպես առաջին հայ մեծ փիլիսոփա: Դավթի կյանքի և գրական ժառանգության մասին վկայություններ կան թե՛ պատմիչների գործերում, թե՛ իր հեղինակած երկերի նախադրություններում ու մեկնություններում, թե՛ ձեռագրերի հիշատակարաններում: Նրա կերպարն արտացոլվել է նաև ժողովրդական բանահյուսության մեջ: Այդուհանդերձ, Դավթի անձի և հոգևոր ժառանգության հետ կապված շատ ու շատ հարցեր մինչ օրս մնում են չլուծված և վիճարկելի: Դավիթ Անհաղթին ընդունված է համարել մեծ իմաստասեր, փիլիսոփայական երկերի հեղինակ և թարգմանիչ, սակայն անհրաժեշտ է նրան ուսումնասիրել որպես փիլիսոփա-աստվածաբան, ինչպիսին ընկալվել է միջնադարում, և ուշադրության արժանացնել նրա անունով հայտնի աստվածաբանական երկերը: Այս տեսանկյունից կարևոր է այն, որ միջնադարյան աղբյուրների համաձայն «Անհաղթ» պատվանունը Դավթին ստացել է ոչ միայն փիլիսոփայական, այլև դավանաբանական վեճերում հաղթելու առթիվ: Հայոց եկեղեցու կողմից նա սրբադասվել է ոչ միայն որպես փիլիսոփայական, այլև աստվածաբանական երկերի, մասնավորապես Խաչին նվիրված ներբողի հեղինակ:

Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկն առավել հայտնի է սկսվածքի առաջին բառով՝ «Բարձրացուցէք» անվամբ: Այն շատ սիրված ու տարածված է եղել միջնադարում, ինչի վկայությունն են բազմաթիվ ընդօրինակությունները ճառընտիրներում, դավանաբանական բնույթի ժողովածուներում: «Բարձրացուցէք»-ն ընդգրկված է եղել միջնադարյան Հայաստանի վարդապետարաններում ուսուցանվող երկերի շարքում: Ականավոր տոմարագետ, փիլիսոփա և մատենագիր Հովհաննես Սարկավագի (XI-XII դդ.) կազմած ուսումնական հաստատություններում հանձնարարելի գրականության ծրագրային ցանկում, որը մեզ է հասել Մխիթար Այրիվանեցու (XIII դ.) միջոցով, Ս. Գրքի, Փիլոն Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու, Եվագր Պոնտացու, Դիոնիսիոս Արեոպագացու, Պրոկղ Դիադոխոսի երկերի կողքին ներառված են նաև Դավթի «Բարձրացուցէք» և «Սահմանք իմաստասիրութեան» երկերը: Հետաքրքրական է, որ *Ներբող*-ը Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի *Աղոթանատույցի* ու Հովհան Սանդակունու *Պատարագանատույցի* հետ զետեղված է «Սուրբ գրեանց» մեջ և դրված է Նոր կտակարանից անմիջապես հետո:

«Բարձրացուցեք»-ը մեծ ազդեցություն է ունեցել հայ դավանաբանական-աստվածաբանական մտքի վրա: Հետագա դարերի հայ մատենագիրները մեծապես օգտվել են այս երկից: «Բարձրացուցեք»-ի և նրա հեղինակի հանդեպ հետաքրքրությունն աճեց հատկապես XII-XIII դդ., երբ ստեղծվեցին *Ներբող*-ի առանձին «պատճառ»-ներ և մեկնություններ: Ուշագրավ է նաև այն, որ երկի ստեղծման նախապատմությունը, Գյուտ կաթողիկոսի և Դավիթ Անհաղթի նամակները, ինչպես նաև *Ներբող*-ի մի հատվածի մեկնությունն ընդգրկված են «Տոնապատճառ» ժողովածուում՝ «Խաչի տոնի պատճառ»-ի մեջ:

Հայ աստվածաբանական ինքնուրույն մատենագրության հնագույն երկերից մեկի, դրան առնչվող պատմական բնագրերի և հետագա մեկնությունների համակողմանի ուսումնասիրությունը շատ կարևոր է Հայոց եկեղեցու աստվածաբանական մտքի պատմության համար: Այն հնարավորություն է տալիս ճշգրտելու և նորովի մոտենալու Դավիթ Անհաղթի անձին, գրական ժառանգությանը, ինչպես նաև Հայոց եկեղեցու պատմությանը և վաղմիջնադարյան հայկական մատենագրությանն առնչվող հարցերին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է պատմագիտական և աստվածաբանական տեսանկյուններից վերլուծել Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը, դրա հետագա մեկնությունները և երկին առնչվող բնագրերը: Ձեռնամուխ լինելով նշյալ երկի համակողմանի ուսումնասիրմանը՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Նորովի անդրադառնալ Դավիթ Անհաղթի անձի և գրական ժառանգության խնդրին՝ ի մի բերելով միջնադարյան տարաբնույթ աղբյուրների տեղեկությունները:
- V դարի Հայոց պատմության համատեքստում քննել *Ներբող*-ի Նախադրությունը, Գյուտ կաթողիկոսի և Դավիթ Անհաղթի նամակները:
- Պարզել «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկի հեղինակի, գրության ժամանակի և հանգամանքների խնդիրը:
- Ներկայացնել Դավիթ Անհաղթին ոչ միայն որպես փիլիսոփա, ինչպես ընդունված է, այլ որպես աստվածաբան և «Բարձրացուցեք»-ի հեղինակ:
- Կատարել «Բարձրացուցեք»-ի մանրակրկիտ բովանդակային վերլուծություն, ցույց տալ նրանում արժարժվող աստվածաբանական հարցերի շրջանակը:
- Վերլուծել Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցեք»-ի մեկնությունը և տաղաչափությունը:
- Ներկայացնել «Բարձրացուցեք»-ի այլ մեկնությունները՝ քննելով դրանց հեղինակային պատկանելությանն առնչվող հարցերը:
- Անդրադառնալ «Բարձրացուցեք»-ի ազդեցությանը հայ աստվածաբանական մատենագրության՝ մասնավորապես Խաչին նվիրված ստեղծագործությունների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմա-բանասիրական քննական և համադրական վերլուծության մեթոդներով՝ առկա ձեռագրական նյութի, հրապարակված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հետազոտության և վերլուծման ճանապարհով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ժամանակագրական տեսակետից ատենախոսությունն ընդգրկում է V դ. երկրորդ կեսից (Դավիթ Անհաղթի ապրած և Ներբող-ի գրության ժամանակը) մինչև XIII դարն (Վարդան Արևելցու կողմից «Բարձրացուցեք»-ի մեկնության ստեղծումը) ընկած ժամանակաշրջանը: Դավիթ Անհաղթի կենսագրությանը, հեղինակած երկերի աղբյուրներին և հայ մատենագրության մեջ դրանց մեկնություններին անդրադառնալու նպատակով կատարվել են որոշակի ժամանակագրական շեղումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ

ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայագիտության համար նորույթ է այն, որ ատենախոսության մեջ առաջին անգամ համակողմանի և ամբողջական ուսումնասիրվում է Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը, դրան առնչվող հրատարակված և անտիպ պատմական, աստվածաբանական ու մեկնողական բնագրերը: Ըստ այդմ՝

- Դավիթ Անհաղթի մասին առկա մատենագրական աղբյուրների և ուսումնասիրությունների քննության արդյունքում մատնանշվում են անհաղթագիտության մեջ տարածված աղբյուրագիտական մի շարք վրիպակներ:
- Համեմատվում են «Բարձրացուցեք»-ի և դրան առնչվող բնագրերի ձեռագիր և հրատարակված տարբերակները՝ ի հայտ բերելով որոշ էական իմաստային տարբերություններ, որոնք մինչ օրս ուշադրության չեն արժանացել:
- Ի մի են բերվում «Բարձրացուցեք»-ի և նրա հեղինակի վերաբերյալ պատմական և մեկնողական բնույթի աղբյուրները, որոնց հիման վրա ճշգրտվում է երկի ստեղծման ժամանակը, հեղինակային պատկանելության խնդիրը:
- Ատենախոսության մեջ առաջին անգամ կատարվում է «Բարձրացուցեք»-ի աստվածաբանական մանրամասն վերլուծություն և համեմատվում է «Սահմանք իմաստասիրութեան» երկի հետ:
- Առանձին քննության են ենթարկվում «Բարձրացուցեք»-ի միջնադարյան «պատճառներ»-ը՝ ճշտելով դրանց հեղինակային պատկանելության հարցը:
- Առաջին անգամ ուսումնասիրության է արժանացել «Բարձրացուցեք»-ի Ներսես Շնորհալու ընդարձակ մեկնությունը, որը դուրս է մնացել

ուսումնասիրողների ուշադրությունից, հավանաբար, մինչ օրս հայերեն բնագրի հրատարակված չլինելու պատճառով:

- «Բարձրացուցեք»-ի մի նոր՝ մինչ օրս անհայտ մեկնություն է հայտնաբերվել «Տոնապատճառ» ժողովածուում:

Ատենախոսությունն ունի նաև ճանաչողական և կիրառական նշանակություն: Աշխատանքի դրույթները կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում «Հայ աստվածաբանական մատենագրություն», «Միջնադարյան մեկնողական գրականություն» դասընթացների շրջանակներում: Ուսումնասիրությունը կարող է ունենալ նաև գիտագործնական նշանակություն. վերջինիս դրույթների լույսի ներքո կարող են վերանայվել Դավիթ Անհաղթի և նրա գրական ժառանգության վերաբերյալ տարածված որոշ տեսակետներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած չորս հոդվածներում, Հանրապետական գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում: «Դավիթ Անհաղթի գործերը. Նորպլատոնական մտքի և Նորպլատոնական տեքստերի տարածումը հին և միջնադարյան Հայաստանում» միջազգային ծրագրի (JRP 2001, JRP 2005) շրջանակներում հեղինակի կողմից կազմվել է Մաշտոցի անվան Մատենադարանում Դավիթ Անհաղթի անունով հայտնի երկերի ձեռագրացուցակ (հրատարակության ընթացքում է):

ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը շարադրելու ընթացքում մեր կողմից օգտագործված նյութերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ձեռագրեր, հրատարակված բնագրեր, ուսումնասիրություններ:

Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկն առաջին անգամ հրատարակվել է 1688 թ.՝ հակաքաղկեդոնական մի շարք երկերի կողքին: Երկրորդ անգամ այն տպագրել է Մարտիրոս դպիր Կոստանդնուպոլսեցին՝ ներառելով Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու, Եփրեմ Ասորու, Հակոբ Մծբնեցու, Եպիփան Կիպրացու, Հակոբ Մրձեցու ճառերից բաղկացած ժողովածուի մեջ: «Բարձրացուցեք»-ն ընդգրկված է նաև Դավիթ Անհաղթի երկերի վեներտիկյան երկու հրատարակությունների մեջ: *Ներբող*-ից աշխարհաբար փոխադրությամբ քաղվածքներ հրատարակվել է «Էջմիածին» ամսագրում, իսկ ամբողջականը՝ Մ. Արաբյանի աշխատասիրությամբ: Նշենք, որ երկը լույս է տեսել նաև անգլերեն՝ Հ. Ներսոյանի թարգմանությամբ:

Ուսումնասիրության ընթացքում մենք գործածել ենք *Ներբող*-ի Վենետիկի 1932 թ. հրատարակությունը՝ նախապես համեմատելով Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ) պահվող հնագույն օրինակի հետ, որը ներառված է Մխիթար Այրիվանեցու ձեռքով 1283 թ. Գեղարդավանքում ընդօրինակված գրչագրում: Դավթի փիլիսոփայական երկերի դեպքում օգտվել ենք Ս.

Արևշատյանի կազմած քննական բնագրերից: Դավիթ Անհաղթի մատենագրության վեներտիկյան հրատարակություններում «Բարձրացուցեք»-ին կից հրատարակված են Ներբողի Նախադրությունը, Գյուտ կաթողիկոսի և Դավիթ Անհաղթի նամակները: Պարզելով, որ դրանք վերցված են «Տոնապատճառ» ժողովածուից, հրատարակված տարբերակը համեմատել ենք ՄՄ 3082 (1267թ.), 3931 (1309թ.), 2039 (1357թ.), 3524 (XIV դ.), թվահամարների «Տոնապատճառներ»-ում առկա համապատասխան հատվածների հետ: Համեմատության արդյունքում ի հայտ են եկել մեր ուսումնասիրության համար կարևոր մատենագրական բնույթի հետաքրքրական փաստեր: «Տոնապատճառ»-ում ներառված «Բարձրացուցեք»-ի մեկնությունը ներկայացնում ենք ըստ 1267 թ. Հաղբատում ընդօրինակված, Վարդան Արևելցու խմբագրությունը համարվող ՄՄ 4139 թվահամարի ձեռագրի:

Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցեք»-ի մեկնության հայերեն ամբողջական բնագիրը դեռևս անտիպ է: Երկի վերլուծությունը կատարել ենք ՄՄ-ում պահվող երկի հնագույն օրինակի՝ Մկրտիչ Թեղենացու կողմից 1298թ. Գլաձորում ընդօրինակված 1409 թվահամարի գրչագրի հիման վրա: Որոշ դրվագների ճշգրտման համար այն համեմատել ենք ՄՄ 1460 (1311թ.), 4253 (1608թ.), 6816 (XVIII դ.) ձեռագրերի, ինչպես նաև Ժ. Կապելետիի կատարած լատիներեն թարգմանության հետ:

Դավիթ Անհաղթի կենսագրության առանձին հարցերի լուսաբանման համար օգտվել ենք նաև ՄՄ 5596 (XIII դ.), 1919 (XV դ.) ձեռագրերից, իսկ «Բարձրացուցեք»-ի «պատճառ»-ների վերաբերյալ ենթազույգ շարադրելիս՝ ՄՄ 3276 (XVII դ.), 8143 (1802 թ.) ժողովածուներից:

«Բարձրացուցեք»-ի հեղինակի, գրության ժամանակի և հանգամանքների հարցերը քննելիս օգտվել ենք Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Մովսես Դասխուրանցու, Թովմա Արծրունու և Անանունի, Ստեփանոս Տարոնեցու (Ստողիկ), Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու Պատմություններից: Թեմային առնչվող որոշ հարցերի լուսաբանման համար կարևոր են նաև Հ. Մելքոնյանի կողմից հրատարակված ասորական և Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակած վրացական աղբյուրները:

Մեր առջև դրված հիմնախնդրի ուսումնասիրման տեսակետից առաջնային են «Սահմանք իմաստասիրութեան» և «Բարձրացուցեք» երկերի «պատճառ»-ները և մեկնությունները: «Սահմանք իմաստասիրութեան» երկի պատճառները հրատարակել է Ն. Ադոնցը: «Բարձրացուցեք»-ի պատճառներից՝ Վարդան Հաղբատեցու հեղինակածը հրատարակել են Ս. Մսերյանցը և Հ. Քյոսեյանը, Դավիթ Քոբայրեցու միակ և այժմ կորած ձեռագիրը՝ Գյուտ քին. Աղանյանցը, իսկ Գրիգոր Աբասյանի «Գիրք Պատճառաց» ժողովածուինը՝ Ն. Ադոնցը և Ս.-Է. Շիրինյանը: Անհրաժեշտության դեպքում նշյալ հրատարակությունները համեմատել ենք ՄՄ-ում պահվող ձեռագրերի հետ: Խիստ արժեքավոր են «Սահմանք իմաստասիրութեան» երկի՝ Առաքել Սյունեցու և Ներսես Շնորհալու մեկնությունները:

Դավիթ Անհաղթի կյանքի և գործունեության վերաբերյալ մասնագիտական շրջանակներում ամենահաճախ վկայակոչվող աղբյուրը «Գիրք Էակաց» անունով

հայտնի երկն է, որը հանդիպում է տարբեր խորագրերով, ընդարձակ և համառոտ տարբերակներով: Երկի առավել ամբողջական տարբերակը տպագրվել է Գ. Սրվանձտյանցի «Հնոց եւ նորոց»-ում: Կարևոր են նաև ձեռագրերի հիշատակարանները, «Գիրք Թղթոց» դավանաբանական ժողովածուն, «Գիրք Պիտոյից» երկը:

«Բարձրացուցեք»-ի աղբյուրները պարզելու համար օգտվել ենք Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու և Հովհան Ոսկեբերանի երկերից: Իսկ *Ներբողի*՝ Հայկական մատենագրության մեջ խաչին նվիրված հետագա ստեղծագործությունների վրա ունեցած ազդեցությունը ցույց տալու համար օգտագործել ենք Թեոդորոս Քոթենավորի, Միսայել եպիսկոպոսի, Զաքարիա Չագեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու խաչին նվիրված ստեղծագործությունները, «Շարակնոց» ժողովածուն:

Դավիթ Անհաղթի և նրա գրական ժառանգության հանդեպ մշտապես մեծ հետաքրքրություն է դրսևորվել թե՛ հայագիտության և թե՛ համաշխարհային գիտության շրջանակներում: Ասվածի վկայությունն է՝ 19-րդ դարից սկսած նրա մասին հրատարակված բազմաթիվ ուսումնասիրությունները:

Հայ և օտարագրի ուսումնասիրողների կողմից Դավիթ Անհաղթն ուսումնասիրվել է հիմնականում որպես փիլիսոփա, հունաբան դպրոցի կարկառուն ներկայացուցիչ, փիլիսոփայական երկերի թարգմանիչ և մեկնիչ: Այս տեսակետից անհրաժեշտ է առանձնացնել Կ. Նոյմանի, Ֆր. Կոնիբերի, Գ. Տեր-Մկրտչյանի, Հ. Մանանդյանի, Ն. Ադունցի, Գ. Հովսեփյանի, Մ. Խոստիկյանի, Լ. Մելիքսեթ-Բեկի, Ն. Ակիմյանի, Վ. Չալոյանի, Ս. Արևշատյանի, Գ. Զահուկյանի, Ա. Մուրադյանի, Ա. Տերյանի, Ժ.-Պ. Մահեի և այլոց արժեքավոր ուսումնասիրությունները: Դավթի կյանքի, ստեղծագործությունների, փիլիսոփայական հայացքների վերաբերյալ կարևոր աշխատություններ են հրատարակված նաև նրան նվիրված հոդվածների ժողովածուներում: Վերը նշված աշխատանքներին մենք անդրադարձել ենք այնքանով, որքանով որ դրանք առնչվում են մեզ հետաքրքրող հարցերին:

Մասնագետներն ուշադրության են արժանացրել Դավիթ Անհաղթի փիլիսոփայական երկերը և հայացքները՝ կատարելով տեքստաբանական, բանասիրական, աղբյուրագիտական քննություն: Դավթի կյանքի և գործունեության վերաբերյալ միջնադարյան աղբյուրները երբեմն մեկնաբանվել են կամայականորեն, միմյանցից անկախ, պատմական համատեքստից դուրս և որպես «առասպել» ընդունելու կանխակալ մտայնությամբ: Վերապահությամբ ընդունելով նաև այն փաստը, որ միջնադարյան պատմական և մեկնողական աղբյուրների համաձայն Դավթին է պատկանում «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը, ուսումնասիրողներն այն բավարար ուշադրության չեն արժանացրել: Այդուհանդերձ, անդրադարձներ կան «Բարձրացուցեք»-ի Նախադրությանը, գրության ժամանակի և հեղինակի խնդրին:

Այսպես՝ Ն. Ակիմյանը Դավիթ Անհաղթի ստեղծագործությունների շարքում առաջինը դասում է «Բարձրացուցեք»-ը՝ վերլուծելով դրա ստեղծման հանգամանքները: Նույն հարցերին են նվիրված Պ. Անանյանի և Ս. Գոճայանի բովանդակային առումով իրարից քիչ տարբերվող հոդվածները: Երկի ընդհանուր

բովանդակության և ոճի վերաբերյալ առանձին ակնարկներ կան Մ. Ավգերյանի, Հ. Գաթրճյանի, Ա. Մուրադյանի, Գ. Մուրադյանի ուսումնասիրություններում: Իսկ Խաչի շարականների վրա *Ներբող*-ի ունեցած ազդեցության մասին նշել են Գ. Ավետիքյանը, Մ. Աբեղյանը և Ն. Թահմիզյանը:

«Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի բովանդակային վերլուծությանն առանձին հոդվածով անդրադարձել է Հ. Ներսիսյանը: Հեղինակը վերլուծում է Դավթի կրոնական փիլիսոփայությունը՝ խիստ հետաքրքրական համեմատություններ անցկացնելով վերջինի անունով հայտնի փիլիսոփայական երկերի և «Բարձրացուցեք»-ի միջև:

«Բարձրացուցեք»-ի բովանդակային վերլուծությունը կատարելիս մեզ համար առանձնապես կարևոր են եղել Մ.-Է. Շիրինյանի և Հ. Քյոսեյանի ուսումնասիրությունները: Խնդրո առարկա երկի մեկնություններին և «պատճառ»-ներին առնչվող հարցերը քննելիս օգտվել ենք Հ. Անասյանի, Փ. Անթապյանի և Ռ. Վարդանյանի աշխատություններից: Ռ. Վարդանյանի մենագրությունը օգտակար է եղել նաև ատենախոսության մեջ առկա տոմարական, տոնածիսական առանձին հարցերի պարզաբանման համար: Իսկ Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցեք»-ի մեկնության և տաղաչափության վերաբերյալ շարադրանք կատարելիս մեզ համար օգտակար են եղել Ղ. Ալիշանի, Ա. Մադոյանի, Շ. Նազարյանի ուսումնասիրությունները:

Խաչին առնչվող դավանաբանական, պաշտամունքային հարցերի ուսումնասիրման համար օգտվել ենք Ա. Կռանյանի, Զ. Կաբադյանի, մենագրություններից, Ա. Սահակյանի հոդվածից:

V դ. Հայաստանի և Հայոց եկեղեցու պատմությանը, դավանաբանական խնդիրներին առնչվող հարցերը բազմակողմանի վերլուծվել են հայագետների կողմից: Մենք պատմական և դավանաբանական մանրամասներին անդրադարձել ենք այնքանով, որքանով որ դրանք առնչվում են խնդրո առարկա ստեղծագործությանը: Այս տեսանկյունից մեզ համար կարևոր են եղել Մ. Չամչյանի և Մ. Օրմանյանի, ինչպես նաև՝ Ժ. Լաբուրի, Ն. Արոնցի, Ե. Տեր-Մինասյանի, Հ. Անասյանի, Պ. Անանյանի, Գարեգին Սարգսյանի, Կ. Յուզբաշյանի, Վ. Վարդանյանի, Կ. Մելիքյանի ուսումնասիրությունները:

Այսպիսով՝ եղած ձեռագրական նյութը, հրատարակված սկզբնաղբյուրները և հրապարակի վրա եղած ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում համակողմանի ուսումնասիրել Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը և դրա մեկնությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից (180 էջ), հավելվածից (14 էջ): Հավելվածում ներկայացված է «Բարձրացուցեք»-ի Նախադրությունը, Գյուտ կաթողիկոսի և Դավիթ Անհաղթի նամակները, Վարդան Հաղբատեցու *Պատճառք*, *Ներբող*-ի միևնույն հատվածի երկու տարբեր՝ Ներսես Շնորհալու և «Տոնապատճառ» ժողովածուում առկա մեկնությունների՝ մինչ օրս անտիպ բնագրեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորվում է ընտրված թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունը, ներկայացվում է աշխատանքի գիտական նորությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում **«Դավիթ Անհաղթի անձի խնդիրը»**, անդրադարձ է կատարվում Դավիթ Անհաղթի անձնավորության և ապրած ժամանակի խնդրին, քննվում է տարբեր ուսումնասիրողների տեսակետները, միանգամայն այլ տեսանկյունից է ներկայացվում նրա մասին հայկական աղբյուրների տեղեկությունները:

Դավիթ Անհաղթի անձնավորության և ապրած ժամանակի առնչությամբ ուսումնասիրողները հիմնականում վկայակոչում են «Գիրք Էակաց» անունով հայտնի երկը, որն ակնհայտորեն բաղկացած է տարբեր շերտերից՝ ոչ միայն պատմական-ժամանակագրական, այլև գրական-ոճային տեսակետից: Որոշ դրվագներից ելնելով՝ այն կարելի է բնորոշել իբրև ձոն, ներբող՝ ուղղված Մովսես Խորենացուն և Դավիթ Անհաղթին: Թեև պատմական անախրոնիզմն ակնհայտ է, այստեղ ներկայացված իրադարձությունները միանգամայն իրական են: Տարբեր ժամանակներում ապրած նշանավոր անձանց և կարևոր պատմական դեպքերի մեկտեղմամբ «Գիրք Էակաց»-ի հեղինակը պատմական աղբյուրների հիման վրա «առասպել է ստեղծել», մեր կարծիքով, հատուկ, ընդ որում՝ Դավիթ Անհաղթին և Մովսես Խորենացուն թե՛ նախաքաղկեդոնական-եփեսոսյան և թե՛ հակաքաղկեդոնական համատեքստում զետեղելու նպատակով: Հեղինակը փորձել է կապ ստեղծել նաև նեստորականության և քաղկեդոնականության միջև: Պատահական չէ, որ երկի սկզբում խոսվում է Նեստորի վարդապետության, իսկ երկրորդ հատվածում՝ Քաղկեդոնի ժողովի մասին: Իսկ Դավթի՝ Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու հետ առնչվելը հավանորեն Աթենքում դասավանդած հայագի Պրոյերեսիոս փիլիսոփայի հետ կապված պատմության արձագանք է: Ուստի, հաշվի առնելով այս ամենը, պետք է փորձել «Գիրք Էակաց»-ի մեջ առասպելականը զանազանել իրականից՝ համեմատելով պատմական այլ աղբյուրների հետ: Այս տեսանկյունից խիստ կարևոր են Դավիթ Անհաղթի որոշ երկերի «պատճառ»-ները՝ գրված Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու, Գրիգոր Աբասյանի կողմից: Քանի որ «պատճառ»-ը՝ որպես մեկնողական ժանրի տեսակ, ինքնին գիտական հիմք է ենթադրում, վերոնշյալ հեղինակները բառացիորեն քննել են Դավիթ Անհաղթ փիլիսոփայի անձի հիմնախնդիրը, իրենց իսկ վկայությամբ, ձեռքի տակ ունենալով հնագույն գրավոր աղբյուրներ:

Դավիթ Անհաղթի կենսագրության վերաբերյալ առավել մանրամասն և ամբողջական տեղեկություններ է հաղորդում Առաքել Սյունեցին «Գիրք Սահմանաց»-ի մեկնության նախաբանում: Սակայն պետք է նշել, որ նրա որոշ հաղորդումներ պետք չէ միանշանակ ընդունել, քանի որ, թվում է, թե երբեմն հեղինակը, ջանալով անպայման գտնել լուծումներ, «ստեղծել, հորինել է» դրանք:

Դավթի կյանքի վերաբերյալ կարևոր տեղեկություններ են հաղորդում հայ պատմիչները՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Սամվել Անեցին, Գիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Վարդան Բարձրաբերդցին:

Երկրորդ ենթագլխում՝ «Դավիթ Անհաղթի գրական ժառանգության հարցը», ի մի են բերված խնդրի վերաբերյալ միջնադարյան պատմական և մեկնողական բնույթի աղբյուրները, ներկայացված են հեղինակին վերագրված երկերը, դրանց վերագրման հնարավոր պատճառներն ու նպատակները:

Դավիթ Անհաղթի գրական ժառանգության մասին տեղեկություններ կան մատենագրական տարաբնույթ աղբյուրներում («Գիրք Էակաց», «Սահմանք»-ի «պատճառ»-ներ, Գիրակոս Գանձակեցու «Պատմություն», Առաքել Մյունեցու «Սահմանք»-ի մեկնություն, հիշատակարաններ): Որպես կանոն, բոլոր աղբյուրներում նշվում են «Սահմանք իմաստասիրութեան»-ը և «Բարձրացուցեք»-ը: Դրանց մեծ մասում հիշատակվում են նաև հունաբան դպրոցի հնագույն թարգմանությունները համարվող Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը» և «Պիտոյից գիրքը»:

Միջնադարյան ձեռագրերում Դավիթ Անհաղթ փիլիսոփայի անունով հայտնի են փիլիսոփայական և աստվածաբանական բնույթի բազմաթիվ ստեղծագործություններ: Հիմք ընդունելով միջնադարում տարածված վերագրման մեթոդները՝ կարող ենք ենթադրել, թե գուցե՞ ոմանք փառասիրության, իսկ Դավթի աշակերտներն (աշակերտ ասելով նկատի ունենք նաև հետագա դարերում նրանից ազդված հեղինակներին) իրենց ուսուցչի հանդեպ ունեցած բարեմտության պատճառով իրենց երկերի վրա դրել են Դավթի անունը: Իսկ այն հանգամանքը, որ V-VIII դարերում ապրել են տարբեր Դավիթներ, որոնք միաժամանակ փիլիսոփաներ են եղել, հետագա դարերի մատենագիրների և հասկապես ձեռագրեր ընդօրինակողների համար կարող էր շփոթմունքի պատճառ դառնալ: Մեկ այլ, մեր կարծիքով շատ հավանական, տարբերակ է այն, որ այդ երկերը պետք է տարածվեին և ճանաչվեին փիլիսոփայական, նաև դավանաբանական վիճաբանություններում հաղթած փիլիսոփայի անունով, ով հայտնի էր նաև Հայաստանի սահմաններից դուրս: Այսինքն՝ տվյալ դեպքում Դավիթ Անհաղթին երկերի վերագրումը որոշակի նպատակ է հետապնդել: Կարծում ենք՝ այս փաստը կարող է սերտորեն կապված լինել որևէ ժամանակաշրջանում դավանաբանական վեճերի սրման և այս նպատակով Դավթին կրկին «վերհանելու» կարևորության հետ:

Երկրորդ գլուխը՝ «ՆԵՐՔՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ» ԵՐԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Երկի հեղինակային պատկանելության հարցը, ստեղծման շարժառիթներն ու պատմական միջավայրը», քննվում է Ներքող-ի ստեղծման մասին միջնադարյան տարաբնույթ աղբյուրներում առկա տեղեկությունները՝ դիտարկելով դրանք V դ. Հայոց և ընդհանուր եկեղեցու պատմության համատեքստում:

«Բարձրացուցեք»-ի հեղինակի, ստեղծման ժամանակի և պատմական միջավայրի մասին հիմնական տեղեկություններն ստանում ենք Ներքողի

Նախադրությունից, Գյուտ Ա Արահեզացի (461-478) կաթողիկոսի և Դավիթ փիլիսոփայի նամակներից, որոնք ընդգրկված են «Տոնապատճառ» ժողովածուում՝ «Խաչի տոնի պատճառ»-ի մեջ:

Դավիթ Անհաղթի կենսագրությանն առնչվող տվյալներից բացի, *Նախադրության* մեջ որոշ տեղեկություններ կան Հայոց գրերի գյուտի, հայ դպրության սկզբնավորման մասին, հիշատակվում են Հայոց Արշակունիների արքայատոհմի անկման նախօրեին և հետո տեղի ունեցած իրադարձությունները: Գյուտի գահակալության տարիներին Անտիոքի նահանգի Օշին գյուղից Հայաստան են գալիս Կոստանդին, Պետրոս և Թեոդորե անունով անձինք: Նրանք խոշոր զգեստներ էին կրում, ոտաբոբիկ էին, կեղծավորի նման պահք էին պահում և ունեին ուղտի մաշկի պես կոշտացած ծունկեր և ճակատներ: Նրանք չէին ընդունում Մարիամին որպես աստվածածին, և խաչը՝ որպես Աստծու խաչ: Գյուտ կաթողիկոսը նամակով դիմում է Դավթին՝ խնդրելով Հայ եկեղեցու վարդապետությունը պաշտպանող երկ գրել:

Միջնադարյան հեղինակներն (Վարդան Հաղբատեցի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Աբասյան) այս անձանց համարում են նեստորականներ: Հայկական, ինչպես նաև օտար աղբյուրներում վկայություններ կան Գյուտ կաթողիկոսի և Պարսից Պերոզ արքայի գահակալության շրջանում Հայաստանում վերջինիս կողմից հովանավորվող նեստորականների ակտիվ գործունեության մասին: Հավանաբար ուղղակիորեն օգտվելով ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ նույն շրջանում Հայաստան նեստորականներ են գալիս ոչ միայն Պարսկաստանից, այլև Բյուզանդական կայսրության արևելյան սահմաններից՝ Անտիոքից:

Դավիթ Անհաղթի նամակի վերջում եղած տեղեկության համաձայն՝ Ներբողը գրվել է Վահան Մամիկոնյանի սպարապետության և մարզպանության ժամանակ (481-505): Հայտնի է, որ այս շրջանում հաջորդաբար Հայոց կաթողիկոսներ են եղել Հովհան Մանդակունին (478-490) և Բաբկեն Ա Ռթմեցին (490-516): Քանի որ Գյուտ կաթողիկոսն իր նամակը գրել է կյանքի վերջին տարիներին, միգրացի վերջին օրերին, հավանական է, որ Դավիթը *Ներբող*-ն ավարտած լինի այն ժամանակ, երբ Գյուտն արդեն մահացել էր: Այս տեսանկյունից, Հովհան Մանդակունու կաթողիկոսության ժամանակ գրված լինելու մասին այս տեղեկությունը, որն արտացոլվել է նաև Ներբողի «պատճառ»-ներում, հեռու չէ իրական լինելուց: «Բարձրացուցեք»-ի գրության ժամանակի մասին այս տեղեկությունից հետո թվարկվում են *Ներբող*-ի ստեղծման շարժառիթների վերաբերյալ տարածված տարբեր կարծիքները, թե իբր այն արտասանվել է Աթենքում, Կ. Պոլսում կամ Ս. Խաչի՝ գերությունից ազատագրման առթիվ: Ինչևէ, այս փոքրիկ հավելվածի հեղինակը, ով հավանաբար «Տոնապատճառ»-ի խմբագիրն է, *Ներբող*-ի ստեղծման վերաբերյալ այս կարծիքները համարում է ոչ հավաստի՝ որպես ճշմարիտ ընդունելով միայն Նախադրության տեղեկությունները:

Երկրորդ ենթագլխում ««Բարձրացուցեք»-ի աստվածաբանական վերլուծությունը», ներկայացված է *Ներբող*-ում արժարժվող աստվածաբանական հարցերի շրջանակը, մատնանշվում է «Սահմանք իմաստասիրութեան» երկի

հետ եղած գաղափարական ընդհանրությունները, անդրադարձ է կատարվում նրանում առկա նորակերտ բառերին:

Դավիթ Անհաղթն իր *Ներբող*-ի բնաբան է ընտրել Սաղմոսաց գրքի հետևյալ՝ «Բարձր արարեք զՏէր Աստուած մեր. երկիր պագեք պատուանդանի ոտից նորա» արտահայտությունը: Հին ուխտում Տիրոջ ոտքերի պատվանդանը համարվում էր Սիոն լեռը, իսկ Նոր ուխտում այդ պատվանդանը Խաչն է, որի վրա բարձրացավ Քրիստոս Աստված: Դավիթ փիլիսոփան իրեն համեմատում է Դավիթ Մարգարեի հետ, ով Իսրայելյան ազգին հորդորում էր երկրպագել Սիոն լեռը, և «հավատի մանուկներին» կոչ է անում ամենուրեք երկրպագել սուրբ Խաչին: Այստեղ գործածվող «հաւատոյ մանկունք» արտահայտությունն առնչվում է հայկական, ինչպես նաև օտար աղբյուրներում հանդիպող «ուխտի մանկունք», «մանկունք եկեղեցոյ» հասկացություններին: Ուշագրավ է, որ «Բարձրացուցեք»-ում «հաւատոյ մանկունս»-ից առաջ դրված «սուրբ, կատարեալ» հատկանիշներով Դավիթ Անհաղթը «Մահմանք իմաստասիրութեան» երկում բնորոշում է աստվածաման փիլիսոփային: Դավթի համար «կատարեալ»-ը աստվածամանության տարբեր հատկանիշները միավորող խորիմաստ եզր է: Աստծուն նմանվելու համար նա կարևորում է նաև սուրբ և արդար լինելը: Սրա հիմքում ընկած է նորպլատոնական փիլիսոփայության այն միտքը, որ Աստծուն մոտենալու համար պետք է լինել մարմնական կրքերից մաքրված և մտքով կատարյալ:

Թե՛ «Բարձրացուցեք»-ում և թե՛ «Մահմանք»-ում հստակորեն նշմարվում է նորպլատոնական փիլիսոփայության և հայրաբանական մտքի մեջ ձևավորված աստվածացման եռաստիճան ճանապարհը՝ մաքրություն-լուսավորություն-աստվածացում: *Ներբող*-ում, բացի նորպլատոնական փիլիսոփայության արձագանքներից, ակնհայտ է նաև արևելաքրիստոնեական միստիկայի ազդեցությունը: Սրա տրամաբանական արտահայտությունն է «իմանալի» բառը (այն նշանակում է միայն մտքով ըմբռնելի, հոգով, մտքի տեսությամբ և ոչ թե աչքով ճանաչելի), որը բազմիցս կիրառվում է Դավթի կողմից՝ նյութական առարկաների, երկրային երևույթների, աստվածաշնչային իրողությունների խորհրդաբանական կողմը ցույց տալու համար:

Փիլիսոփայական-աստվածաբանական մուտքից հետո Դավիթը բացատրում է «խաչ» բառի նշանակությունը՝ բաժանելով չորս եղանակների՝ *բնական, սեռական, ձևական և իմացական*: Խաչի աստվածաբանությունն անխզելիորեն կապված է քրիստոսաբանության հետ: «Բարձրացուցեք»-ում կիրառվող «աստուածախաչ» բառն ինքնին դավանաբանական, քրիստոսաբանական նշանակություն ունեցող եզր է, ինչպես և «Աստուածածին»-ը: Հետևելով հայրաբանական գրականության մեջ ընդունված Հին և Նոր կտակարանների գուգադրման սկզբունքին՝ Դավիթը ցույց է տալիս Խաչի գաղափարական նախօրինակները:

Երրորդ գլուխը՝ «ՆԵՐՏՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ» ԵՐԿԸ ՀԱՅ ՄԻՋՆԱՂԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ, բաղկացած է չորս ենթաբաղկից:

Առաջին ենթագլխում՝ «Երկի ազդեցությունը VII-XI դդ. ստեղծված Խաչի ներբողների և շարականների վրա», ներկայացված են Թեոդորոս Քոթենավորի, Սահակ Չորոփորեցու, Միսայել եպիսկոպոսի, Չաքարիա Չազեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ Խաչին նվիրված ստեղծագործությունների վրա «Բարձրացուցեք»-ի ունեցած ազդեցությունը:

VII դարի հեղինակ Թեոդորոս Քոթենավորը Խաչին նվիրված իր Ներբողը հավանաբար գրել է Խաչափայտի գերեղարձի առթիվ: Հեղինակը, գործածելով Դավիթ Անհաղթի գաղափարները և բնորոշումները, դրանք ընմիջարկում, հարստացնում է նոր բառերով և արտահայտություններով: Քոթենավորի ստեղծագործությունն աչքի է ընկնում միանգամայն նոր, հետաքրքրական և խորը աստվածաբանական գաղափարներով և ձևակերպումներով:

IX դարում Խաչին նվիրված ներբողներ են գրել Արցախի նահանգում ապրած Միսայել եպիսկոպոսը և Չաքարիա Ա Չազեցի Հայոց կաթողիկոսը: Նրանց ներբողները թեև լեզվական, կառուցվածքային և աստվածաբանական առումով ավելի պարզ ստեղծագործություններ են, սակայն առաջին իսկ հայացքից նկատելի է «Բարձրացուցեք»-ի ազդեցությունը: Միսայել եպիսկոպոսի *Ներբող*-ում դա երևում է հատկապես Խաչի բանաստեղծաշունչ որակումների հատվածներում: Բացի այդ՝ Միսայելը Դավիթ Անհաղթից վերցրել է աստվածաբանական-փիլիսոփայական որոշ մտքեր (օրինակ՝ հոգևոր և նյութական մակարդակներում Խաչի իմաստային երկփեղկման գաղափարը): Բացի բովանդակությունից, մեկ այլ՝ կառուցվածքային օրինաչափություն է նկատվում Դավիթ Անհաղթի, Թեոդորոս Քոթենավորի և Չաքարիա Չազեցու նշյալ ստեղծագործություններում: Դրանք բոլորը բաղկացած են երկու հիմնական մասերից: Ավելի ազատ ռճով շարադրված առաջին մասում հեղինակները տալիս են խորը աստվածաբանական, փիլիսոփայական ձևակերպումներ, իսկ բանաստեղծական որոշակի ռիթմ ունեցող երկրորդ հատվածում, որի յուրաքանչյուր պարբերությունն սկսվում է միևնույն բառով, Խաչի փառաբանությանը զուգահեռ ներկայացվում են հիմնականում Խաչի նախապատկեր համարվող հինկտակարանային դրվագները:

Գրիգոր Նարեկացու (947-1003)՝ Խաչին նվիրված ներբողը, որը հայտնի է երկու տարբերակներով, իմաստային և գեղարվեստական տեսակետից ավելի ինքնատիպ է: Այնուամենայնիվ, նրա և Դավթի երկերում նկատվում է որոշ բովանդակային և կառուցվածքային ընդհանրություններ: Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ նույնպես առկա են նորալատոնական փիլիսոփայությանը և արևելաքրիստոնեական միստիկային բնորոշ կարևոր գաղափարներ և արտահայտություններ:

Խաչին նվիրված չափաբերական ներբող է հեղինակել նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990-1058): Այս երկի յուրաքանչյուր տողն սկսվում է «Արինեալ ես» արտահայտությամբ, ինչպես «Բարձրացուցեք»-ի գոհաբանական-բանաստեղծական հատվածը և ավարտվում է «եալ» հանգով: Ողջ ստեղծագործության մեջ զգացվում է «Բարձրացուցեք»-ի ազդեցությունը, հիմնականում համընկնում են պատկերների նկարագրության

հերթականությունը, իսկ որոշ հատվածներ, կարծես, ուղղակի Դավթի Ներքողի չափածո վերապատումը լինեն:

Երկրորդ ենթագլխում՝ «Ներքող-ի «պատճառ»-ները», քննության են ենթարկվում XII-XIII դդ. ստեղծված «Բարձրացուցեք»-ի «պատճառ»-ները, դրանց առնչվող աղբյուրագիտական և հեղինակային հարցերը:

«Բարձրացուցեք»-ի «պատճառ»-ները կարևոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն Դավիթ Անհաղթ փիլիսոփայի կյանքի, գործունեության, Ներքող-ի գրության շարժառիթների և բովանդակության մասին, այլև Սահակմեսրոպյան աշակերտների, հայ դպրության սկզբնավորման և V դարի Հայոց պատմության այլ հարցերի վերաբերյալ:

«Պատճառ»-ներից հնագույնը՝ «Սկիզբն բարեպաշտութեան Հայաստանեայց ունիմք իմանալ...» սկսվածքով, զետեղված է Ներսես Շնորհալու հեղինակած՝ «Բարձրացուցեք»-ի ընդարձակ մեկնության սկզբում, բայց հաճախ ձեռագրերում հանդես է գալիս որպես առանձին միավոր՝ այս դեպքում կրելով Վարդան Վարդապետի անունը: Ներսես Շնորհալին «Բարձրացուցեք»-ի մեկնությունը գրել է XII դ. մատենագիր Վարդան Հաղբատեցու խնդրանքով: Միանգամայն հավանական ենք համարում Ն. Ակինյանի այն կարծիքը, որ Վարդան Հաղբատեցին գրել է «Բարձրացուցեք»-ի *Պատճառը* և զետեղել Ներսես Շնորհալու *Մեկնության* սկզբում:

Ժամանակագրական տեսակետից հաջորդ «պատճառ»-ը պահպանվել է XIII կամ XIV դդ. թվագրվող եզակի գրչագրում, որը հնախուգական ուղևորության ընթացքում Հաղբատ գյուղի Զառնի կոչվող այրում հայտնաբերել է Գյուտ քահանա Աղանյանցը: Այն կրում է հետևյալ խորագիրը. «Դավթի փիլիսոփայի ներքողեան ի սուրբ խաչն Քրիստոսի ասացեալ եւ զպատճառն անընթեր եղեալ Դավիթ քահանաի»: Մենք ընդունում ենք, որ նշված Դավթի քահանան Վարդան Հաղբատեցու աշակերտ Դավիթ Քոբայրեցին է, ով հայտնի է որպես «պատճառ»-ների հեղինակ:

Գրիգոր Աբասյանի (XII-XIII դդ.) կազմած «Գիրք Պատճառաց» ժողովածուում «Սկիզբն և պատճառ Բարձրացուցեացն և տեսութիւն»-ն ընդգրկված է «նուրբ գրեանք»-ի մեջ: Այս «պատճառ»-ի սկսվածքն է. «Հրաշագործողն արարածոց Աստուած, որ ի սկզբանէ գոյացոյց զամենայն...»: Գրիգոր Աբասյանն ամբողջությամբ վերցրել է Դավիթ Քոբայրեցու *Պատճառը*, կատարել որոշ կրճատումներ և հավելումներ՝ օգտվելով նաև Վարդան Հաղբատեցուց, *Ներքող-ի Նախադրությունից* և այլ աղբյուրներից: Ինքնուրույն ուսումնասիրություն կատարելով հանդերձ՝ նա անփոփոխ պահպանել է տարբեր աղբյուրներից վերցված, հաճախ միմյանց հակասող տեղեկությունները:

Երրորդ ենթագլխում՝ ««Բարձրացուցեք»-ի՝ Ներսես Շնորհալու մեկնությունը և տաղաչափությունը», աստվածաբանական տեսանկյունից վերլուծության է ենթակվում Ներսես Շնորհալու՝ *Ներքող-ի* մեկնությունը և տաղաչափությունը: Անդրադարձ է կատարվում հեղինակի՝ Դավիթ Անհաղթին առնչվող մյուս ստեղծագործություններին:

Մեկնիչն առանձնակի խորությամբ վերլուծում է «Բարձրացուցեք»-ի՝ քրիստոսաբանությանն առնչվող հատվածները, արծարծում Քրիստոսի մարմնի

անապականության վերաբերյալ Հայոց եկեղեցու վարդապետությունը: «Մուտի» և «Ճշմարիտի», «անկատարի» և «կատարյալի» տարբերությունը ցույց տալու համար Ներսես Շնորհալիին մեկնության մեջ օրինակ է բերում հին հունական դիցաբանությունից՝ միաժամանակ ցույց տալով իր հետաքրքրությունը հին աշխարհի մշակույթի հանդեպ: Որոշ հատվածների մեկնության մեջ նա օգտվել է թե՛ հինկտակարանյան և թե՛ նորկտակարանյան պարականոն բնագրերից: Երբեմն առանց աղբյուրը նշելու ներկայացնում է տարբեր մեկնիչների տեսակետները, համեմատում Դավիթ Անհաղթի հետ, այնուհետև հայտնում իր կարծիքը՝ ստեղծելով մեկնաբանական գրականության մեջ տարածված այսպես կոչված «շղթա-մեկնություն»:

Արձակ մեկնությունից հետո Ներսես Շնորհալիին տաղաչափել է «Բարձրացուցեք»-ը: Չափածոն բաղկացած է 620 տողից: Նա «Բարձրացուցեք»-ի մեկնությունը և տաղաչափությունը գրել է ավելի ուշ շրջանում, սակայն Դավիթ Անհաղթին հիշատակում է ավելի վաղ գրված «Վիպասանության» մեջ, ինչպես նաև առանձին հանելուկում: Ներսես Շնորհալիին մեկնել է նաև «Սահմանք իմաստասիրութեան» երկի վերջում զետեղված «Ամենայն չար տանջելի» սկսվածքով փոքրիկ գրվածքը:

Չորրորդ ենթազյխում «Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներքողի մեկնությունը «Տոնապատճառ» ժողովածուում», վերլուծվում է մեր կողմից հայտնաբերված բնագրի հեղինակային պատկանելության հարցը և բովանդակությունը:

Հակված ենք կարծելու, որ այս մեկնության հեղինակը Վարդան Հաղբատեցուց հետո «Տոնապատճառ»-ի հաջորդ խմբագրությունն իրականացրած Վարդան Արևելցին է, ով հայտնի է իր բազմաթիվ մեկնողական երկերով: Մեկնիչը նախևառաջ անդրադառնում է «Դավիթ» անվան, այնուհետև «Ներբողեան» բառի բացատրությանը: Իր կարևորությամբ «Բարձրացուցեք»-ը համեմատվում է Գրիգոր Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» ճառի հետ: Հեղինակը մեջբերումներ է կատարում Դիոնիսիոս Արեոպագացու, Փիլոն Եբրայեցու երկերից: Արտահայտվում է այն միտքը, որ պատմության ընթացքում տարբեր ազգեր և անհատներ արժանացել են Աստծու շնորհին, բայց ոչ թե անճառելի, այլ՝ ճառելի: Դրանց շարքում մեկնիչը հիշատակում է պտղոմեականներին, եգիպտացիներին, քաղդեացիներին, Զրադաշտին, Նոյին, Սողոմոն Իմաստունին, Հովնան մարգարեին, Պողոս առաքյալին, Դավիթ Անհաղթին: Սակայն, միայն Խաչափայտն է արժանացել Աստծու անճառելի շնորհին՝ փառավորվելով իր վրա բարձրացած Քրիստոսի փառքով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ հանրագումարի են բերվում ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. Միջնադարյան հեղինակների (Ներսես Շնորհալի, Վարդան Հաղբատեցի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Աբասյան, Ասողիկ, Մամվել Անեցի, Կիրակոս Գանձակեցի և Վարդան Բարձրաբերդցի) համաձայն՝ Դավիթ Անհաղթ փիլիսոփան գործել է V դ. երկրորդ կեսին: Նա եղել է Մովսես Խորենացու աշակերտն ու գործակիցը և Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի կրտսեր

Ժամանակակիցը, ուստի պետք է ապրած լինի մոտավորապես 430-ական թվականներից մինչև VI դ. առաջին քառորդն ընկած ժամանակահատվածում:

2. Դավիթ Անհաղթը հունաբան դպրոցի հիմնադիրներից է և իր թարգմանական գործունեության առաջին շրջանում մասնակցել է Դիոնիսիոս Թրակացու՝ «Քերականական արուեստ» երկի, հնարավոր է նաև «Պիտոլից Գրքի» թարգմանությանը: Ալեքսանդրիայում ապրած տարիներին գրել է «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի» և հավանաբար փիլիսոփայական այլ երկեր: Հայաստան վերադառնալուց հետո հեղինակել է «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը («Բարձրացուցեք») և շարունակել գրական-թարգմանական գործունեությունը:

3. V-VIII դարերում Հայաստանում ապրել և գործել են «Դավիթ» անունով մի քանի հեղինակներ: Մովսես Խորենացու գործակից Դավիթը նրանցից զատվել է ոչ թե «Ներգինացի» կամ «Անհաղթ» պատվանունով (ինչպես ընդունված է այժմ մեզանում), այլ՝ պարզապես «փիլիսոփա»: Այդպես են նրան կոչում «Գիրք Էակաց»-ի հեղինակը, «Տօնապատճառ» ժողովածուում «Մաչի տոնի պատճառ»-ի խմբագիրը, Ներսես Շնորհալին, Վարդան Հաղբատեցին, Դավիթ Քոբայրեցին, Գրիգոր Աբասյանը: «Ներգինացի» անունը Դավթի երկերի խորագրերում և ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում է միայն XII դ. վերջից և XIII դ. սկզբից սկսած, ինչի հիման վրա էլ մասնագետները Ներգին (Ներգինա) գյուղը համարում են նրա ծննդավայրը: Սակայն, մեզ հասած ավելի վաղ շրջանի աղբյուրներում նշվում է, որ Դավիթ Անհաղթ փիլիսոփան ծնվել է Հարք գավառի Հերթթ (Հերթ, Հերեան) գյուղում: Սա չի նշանակում, թե հայ մատենագրության մեջ նույնացրել, շփոթել են Դավիթ փիլիսոփային և ավելի ուշ ապրած Դավիթ Հարքացուն: Թե՛ պատմական, թե՛ մեկնողական բնույթի աղբյուրներում, անգամ ձեռագրերի խորագրերում (գոնե մեզ հայտնի) Դավիթ Անհաղթը երբեք չի կոչվել «Հարքացի» (այլ միայն երբեմն՝ գյուղի անունով՝ «Հերթթնացի» կամ «Հերտանացի») և Դավիթ Հարքացու անունով հայտնի աստվածաբանական բնույթի երկերն իրականում չեն վերագրվել Դավիթ Անհաղթին: Սա հուշում է, որ միջնադարում հստակ գատորոշել են Դավիթ Հարքացուն, ով ամենևին պարտադիր չէր, որ ծնված լիներ Հարք գավառում, և նրանից առաջ ապրած Դավիթ Անհաղթ փիլիսոփային, ով ծնվել է Հարք գավառում, սակայն պարտադիր չէր, որ կոչվեր Հարքացի: Այսպիսով, Դավիթ Հարքացուն և Հարք գավառում ծնված Դավիթ Անհաղթին տարբեր անձնավորություններ պետք է համարել: Մեր կարծիքով, նրանք հենց այդպես էլ ընդունվել են միջնադարյան հեղինակների կողմից:

4. Հայ եկեղեցու կողմից Դավիթ Անհաղթի սրբադասումը խիստ կարևոր, միևնույն ժամանակ հաճախ անտեսված հանգամանք է: Այստեղ կարևոր է նաև այն, թե V-VIII դարերում ապրած Դավիթներից կոնկրետ ո՞ր մեկն է սրբադասվել: Քիչ հավանական է, որ Հայ եկեղեցու գործիչները «Դավիթ Անհաղթ փիլիսոփա» անվան տակ սրբադասեին մի խումբ «Դավիթ»-ների: Նրանք կոնկրետ անձի են նկատի ունեցել: Իսկ այդ անձին համարել են Մովսես Խորենացու գործընկերը և կրտսեր ժամանակակիցը, «Սահմանք իմաստասիրութեան», «Ներբողեան ի սուրբ

Խաչն աստուածընկալ» և այլ փիլիսոփայական և աստվածաբանական բնույթի երկերի հեղինակը:

5. Միջնադարյան հեղինակների վկայությամբ («Բարձրացուցեք»-ի Նախադրության հեղինակ կամ խմբագիր, Վարդան Հաղբատեցի, Ներսես Շնորհալի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Աբասյան, Առաքել Սյունեցի, Կիրակոս Գանձակեցի)՝ Դավիթ Անհաղթը Խաչին նվիրված ներբողը գրել է Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի պատվերով՝ ընդդեմ Հայաստան ներթափանցած նեստորականների: Ըստ «Գիրք Էակաց»-ի՝ Դավիթն այս ստեղծագործությունն արտասանել է Կ. Պոլսում Խաչի տոնի առթիվ՝ Մարկիանոս կայսեր խնդրանքով: Սակայն «Բարձրացուցեք»-ի պատճառների հեղինակներն այս տեղեկությունը համարում են ոչ հավաստի:

6. Որոշ ընդհանրություններ են նշմարվում Դավիթ Անհաղթի՝ Գյուտ կաթողիկոսին և Մովսես Խորենացու՝ Սահակ Բագրատունու ուղղված նամակների, ինչպես նաև՝ «Բարձրացուցեք»-ի և «Պատմութիւն Հայոց»-ի գրության ժամանակի և հանգամանքների միջև: Հակապարսկական խմբավորման գլուխ կանգնած Սահակ Բագրատունու հանձնարարությամբ մոտավորապես 478թ. Մովսես Խորենացին սկսում է գրել իր «Հայոց պատմությունը»: Պարսկաստանի դեմ ուղղված պայքարն անհրաժեշտ էր հզորացնել նաև դավանաբանական տեսակետից, որովհետև նեստորականները հովանավորվում էին Պերոզ թագավորի կողմից: Եվ ինչպես այդ ժամանակվա Հայոց աշխարհիկ առաջնորդը՝ Սահակ Բագրատունին, պատվիրեց Մովսես Խորենացուն գրել «Հայոց պատմությունը», այնպես էլ Հայոց հոգևոր առաջնորդ Գյուտ կաթողիկոսը վերջինիս գործակից Դավիթ փիլիսոփային պատվիրեց գրել Հայոց եկեղեցու դավանանքը պաշտպանող երկ: «Բարձրացուցեք»-ի պատվիրատուն Գյուտ կաթողիկոսն էր, սակայն հնարավոր է, որ Դավիթն այն ավարտել է, երբ վերջինս արդեն մահացել էր, այսինքն՝ Հովհան Մանդակունու կաթողիկոսության շրջանում: Հետևաբար, *Ներբող*-ի գրությունը կարելի է թվագրել մոտավորապես 478-482 թթ. ընկած ժամանակահատվածում:

7. «Բարձրացուցեք»-ը Խաչին նվիրված ստեղծագործություն է, սակայն ընդգրկում է աստվածաբանական հարցերի լայն շրջանակ՝ քրիստոսաբանություն, փրկագործություն, մարեմաբանություն, եկեղեցաբանություն, վախճանաբանություն և այլն: Կարելի է ասել, որ եթե Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայական հայացքների ողջ համակարգը ներկայացրել է «Սահմանք իմաստասիրութեան» երկում, ապա աստվածաբանական գաղափարներն ամփոփել է «Բարձրացուցեք»-ում: Այս իմաստով այն հետաքրքրական է նաև Հայ եկեղեցու վաղ շրջանի աստվածաբանական-դավանաբանական մտքի ուսումնասիրման համար:

8. *Ներբող*-ում ակնհայտ է փիլիսոփայություն-աստվածաբանություն կապը: Այս տեսակետից հատկանշական է ստեղծագործության ընդհանուր կառուցվածքը: Այն սկսվում է ոչ թե Խաչի վերաբերյալ սուրբգրային մեջբերումներով (բացի սկսվածքից, իհարկե), այլ փիլիսոփայական ձևակերպումներով: Խաչի փիլիսոփայական բնութագրումը նախորդում է աստվածաբանական վերլուծությանը, որին հաջորդում են գոհաբանական,

բարոյաբանական թեմաներով դրվագները: Այս փաստը մատնանշում է դեռևս վաղ միջնադարում ձևավորված այն ընկալումը, ըստ որի փիլիսոփայությունն աստվածաբանության նախադրուժն է, իսկ Աստծու գիտությունը հասկանալու համար անհրաժեշտ է փիլիսոփայության իմացությունը: Բովանդակային առումով հետաքրքրական ընդհանրություններ կան «Սահմանք իմաստասիրութեան» երկի և «Բարձրացուցեք»-ի միջև: Փիլիսոփա-աստվածաբան Դավիթը, կարծես, խորհրդաբանորեն զուգադրում է *փիլիսոփայությունը* և *Խաչը*: Եթե փիլիսոփայությունն աստվածաբանության նախադրուժը և աստվածանմանությանը հասնելու ճանապարհն է, ապա «աստուածախաչ»-ը մարմնական կրքերից ազատագրելու, կատարելության և փրկության հասնելու գործիքն է: *Ներբող*-ում նկատվում է նաև արևելաքրիստոնեական միստիկայի ազդեցությունը:

9. «Բարձրացուցեք»-ն ուշագրավ է նաև բանասիրական տեսանկյունից: Նրանում բազմաթիվ են նորակերտ, հատկապես աստվածաբանական նշանակություն ունեցող բառերը («աստուածախաչ», «խաչակառք», «խաչանալ», «քրիստոսագարդ», «քրիստոսապսակեալ» և այլն), որոնք հետագայում որպես եզրեր լայնորեն կիրառվում են հայ եկեղեցական մատենագիրների երկերում:

10. Ստեղծմանը հաջորդող դարերի ընթացքում «Բարձրացուցեք»-ը կարևոր դեր է ունեցել հայ մատենագրության մեջ: Թեոդորոս Քոթենավորը, Սահակ Ձորովորեցին, Միսայել եպիսկոպոսը, Չաքարիա Չագեցին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Ներսես Շնորհալիի Խաչին նվիրված իրենց ստեղծագործություններում օգտվել են *Ներբող*-ից թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային առումներով՝ հաճախ բառացիորեն կրկնելով Դավիթ արտահայտություններն ու ձևակերպումները:

11. Մեզ են հասել Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի՝ Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու հեղինակած «պատճառ»-ները: Վարդան Հաղբատեցու Պատճառը զետեղված է Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցեք»-ի մեկնության սկզբում: Գրիգոր Աբապանն իր «Գիրք պատճառաց»-ում տեղադրել է Քոբայրեցու Պատճառը՝ խմբագրելով և ճշգրտելով որոշ խնդրահարույց դրույթներ և կատարելով սեփական՝ խիստ հետաքրքրական հավելումները: «Պատճառ»-ների հեղինակներն օգտվել են միմյանցից, նաև օգտագործել «Բարձրացուցեք»-ի Նախադրությունը, Գյուտ կաթողիկոսի ու Դավիթ Անհաղթի նամակները և այլ հնագույն աղբյուրներ:

12. Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկը հայ ոչ թարգմանական, ինքնուրույն մատենագրության եզակի ստեղծագործություններից է, որ արժանացել է մեկնության, այն էլ հայ աստվածաբանական մտքի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ներսես Շնորհալու կողմից: Հեղինակը կիրառել է ինչպես խորհրդաբանական-այլաբանական (Ալեքսանդրյան դպրոց), այնպես էլ բառացի-տառացի (Անտիոքյան դպրոց) մեթոդները: Շնորհալիի առանձնակի խորությամբ վերլուծել է «Բարձրացուցեք»-ի՝ քրիստոսաբանությանն առնչվող հատվածները՝ դրանց մեկնաբանության մեջ արտահայտելով իր սեփական հայացքները: Նա մեծ ուշադրություն է դարձնում նաև աստվածաշնչային, հատկապես Հին և Նոր

կտակարանների գուգադրմանը վերաբերող դրվագներին: Այս իմաստով կարելի է ասել, որ «Բարձրացուցեք»-ի մեկնությանը զուգահեռ Շնորհալին նաև Ս. Գրքի մեկնությունն է կատարում: Հետաքրքրական է, որ հեղինակն օգտվել է հինկտակարանյան և նորկտակարանյան պարականոն բնագրերից: Մեկնության մեջ բազմաթիվ են առօրյա կյանքից բերված օրինակները, ինչը կարող է օգտակար լինել ժամանակի սոցիալ-տնտեսական տարբեր երևույթներն ուսումնասիրելու համար:

13. Արձակ մեկնությունից հետո Ներսես Շնորհալին տաղաչափել է «Բարձրացուցեք»-ը: Այս ստեղծագործությունը հետաքրքրական է ոչ միայն գեղագիտական, բանաստեղծական, այլև զուտ բովանդակային առումով, քանի որ, «Բարձրացուցեք»-ի չափածո տարբերակը լինելուց բացի, հանդիսանում է դրա յուրօրինակ մեկնությունը: Դավթի կիրառած բարդ և խրթին արտահայտությունները և բառերը, որոնք լրացուցիչ բացատրության կարիք ունեն, նա փոխարինել է ավելի պարզերով: Իսկ Դավթի դժվարընկալելի և մեկնության կարոտ արտահայտությունները նույնությամբ գործածելու դեպքում էլ տվյալ քառատան մեջ ինչ-որ կերպ անպայման տալիս է դրանց բացատրությունը: Ներսես Շնորհալու *Ներբողյան*-ը Դավթի «Բարձրացուցեք»-ի բանաստեղծական վերապատումն է, սակայն իր կառուցվածքով, երաժշտականությամբ և գեղարվեստական արժեքով կարող է դիտվել որպես ինքնուրույն ստեղծագործություն:

14. «Տօնապատճառ» ժողովածուում, «Խաչի տոնի պատճառ»-ի մեջ «Բարձրացուցեք»-ի գրության նախապատմությունից (Նախադրություն), Դավիթ Անհաղթի և Գյուտ կաթողիկոսի նամակներից բացի, ներառված է «Բարձրացուցեք»-ի «Օրհնեալ ես» արտահայտությամբ սկսվող գոհաբանական հատվածի առաջին երկու պարբերությունների՝ «Օրհնեալ ես, աստուածագարդ քրիստոսապսակեալ փայտ սուրբ, որ միայն յանշունչս և ի շնչավորս...», «Օրհնեալ ես քրիստոսապսակեալ փայտ սուրբ, որ յերկրի բուսանելով...» մեկնությունը: Այս ստեղծագործության հավանական հեղինակ ենք համարում Վարդան Արևելցուն՝ ելնելով հետևյալ հիմնադրություններից. ա. բնագիրը հանդիպում է «Տօնապատճառ» ժողովածուի՝ Վարդան Արևելցու խմբագրության մեջ, բ. միջնադարյան մեկնիչների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ձեռագրերում Վարդան Արևելցու ստեղծագործությունների շարքում նշվում է նաև «Բարձրացուցեք»-ի մեկնությունը: Այս բնագիրն ուշագրավ է ոչ միայն զուտ աստվածաբանական, այլև հայ միջնադարյան բնագիտական մտքի ուսումնասիրման համար:

15. Դավիթ Անհաղթի՝ «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի՝ միջնադարյան վարդապետարաններում ուսուցանվող ստեղծագործությունների շարքում ընդգրկված լինելը, դրա տարբեր «պատճառ»-ների ու մեկնությունների առկայությունը և հայ մատենագրության վրա ունեցած մեծ ազդեցությունը վկայում է Հայ եկեղեցու աստվածաբանական-դավանաբանական, ծիսական և կրթական համակարգում «Բարձրացուցեք»-ի ունեցած կարևոր դերի մասին:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մելքոնյան Ա., Դավիթ Անհաղթին վերագրվող երկերի վավերականության հարցի շուրջ, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 13, Երևան, Պատմության ինստիտուտ, 2012, էջ 46-56:
2. Մելքոնյան Ա., Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի «Պատճառ»-ները, «Պատմաբանասիրական հանդես», 2013, թիվ 2 (193), էջ 202-214:
3. Մելքոնյան Ա., «Հաւատոյ մանկունք»-ը և «Կատարեալ փիլիսոփա»-ն ըստ Դավիթ Անհաղթի, «Վէմ» համահայկական հանդես, 2013, թիվ 3 (43), էջ 69-77:
4. Մելքոնյան Ա., Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողի մեկնությունը «Տօնապատճառ» ժողովածուում, «Էջմիածին», 2013, նոյեմբեր (ԺԱ), էջ 84-90:

Армине Мелконян

*Панегирик Богоприимному Святому Кресту Давида Непобедимого и его
комментарии
(исторический и богословский анализ)*

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 25.00.01 "Теория и история религии (религиоведение)"

Защита состоится 14 июля 2014 г., в 14:00 на заседании специализированного совета ВАК Богословии 068 при Ереванском государственном университете (Ереван 0025, Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус).

РЕЗЮМЕ

Данная работа посвящена комплексному изучению "*Панегирика Богоприимному Святому Кресту*" выдающегося армянского философа и богослова 5-6 веков Давида Непобедимого, исторических текстов, связанных с этим произведением, его дальнейших 'причин' и комментариев.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы (180 с.), приложения (14 с.). В первой главе обсуждены проблемы жизни, деятельности и литературного наследия Давида, с сопоставлением различных источников осуществляется новый подход к этим вопросам. Во второй главе обсуждается история создания "*Панегирика*", делается богословский анализ. В третьей главе говорится о влиянии "*Панегирика*" на армянскую средневековую литературу, о его "причинах", созданных в XII-XIII веках, о толковании Армянского Католикоса Нерсеса Шнорали (1102-1173) и о другом комментарии из "*Книги толкований церковных праздников*" ("*Тонапатчар*").

Армянские средневековые авторы (анонимный автор Предисловия "*Панегирика*", Нерсес Шнорали, Вардан Ахбатеци (XII в.), Давид Кобайреци (1150?-1220), Григор Абасян (XII-XIII вв.), Киракос Гандзакети (1200-1271), Аракел Сюнеци (XIV-XV вв.)) свидетельствуют, что Давид написал *Панегирик* по заказу Католикоса Гюта Араезаци (461-478), против проникшего в Армению несторианства. В времени и в обстоятельствах написания "*Истории Армении*" Мовсеса Хоренаци (V в.) и "*Панегирика*" Давида Непобедимого заметны общие черты. Мовсес Хоренаци начал писать свою "*Историю Армении*" примерно в 478г., сыгравшей большую роль в борьбе армян против Персии. Было необходимо так же укрепить позиции с религиозно-догматической стороны, потому что несторианцы поддерживались самим Перозом-царем Персии. Князь Саак Багратуни поручил Мовсесу Хоренаци написать "*Историю Армении*", тогда как духовный правитель Гют католикос поручил Давиду, сотруднику Мовсеса, написать работу, защищающую доктрину Армянской Церкви. Давид, возможно, закончил "*Панегирик*", когда Гюта не было уже в живых, а католикосом был Ован

Мандакуни (478-490). Мы считаем, что "Панегирик" был создан примерно в 478-482.

"Панегирик" является философско-богословским произведением. Он посвящен Кресту, но в нем обсуждается широкий круг богословских вопросов из областей христологии, сотериологии, экклесиологии, эсхатологии, мариологии т.д. В "Панегирике" и в "Определении философии" Давида Непобедимого заметны общие идеи и выражения. Влияние восточно-христианской мистики четко отслеживается в этом труде. Для этого произведения характерно и наличие неологизмов, созданных автором, в частности они суть богословские термины: «Աստուծաշին» - крест Божий, «Դշշիւիւ» - статья подобным Кресту, «քրիստոսաշին» - украшенный Христом, «քրիստոսաշինաւիւ» - увенчанный Христом и т.д., широко употребляемые впоследствии в армянской литературе. Армянские средневековые авторы Теодорос Кртенавор (VII в.), Саак Дзоропореци (католикос в 677-703), Мисаел епископ (IX в.), Закария Дзагеци (католикос в 855-876), Григор Нарекаци (X в.), Григор Магистрос Пахлавуни (XI в.), Нерсес Шнорали в сочинениях, посвященных кресту использовали "Панегирик" с точки зрения идеологии и структуры.

Существуют две различные "причины" "Панегирика", авторами которых являются Вардан Ахбатечи и его ученик Давид Кобайреци. Григор Абасян, вставив "Причину" Давида Кобайреци в своей "Книге причин" редактировал и прояснил некоторые спорные вопросы, делая свои дополнения. Эти 'причины' имеют интересные свидетельства о жизни и деятельности Давида Непобедимого, о мотивации создания "Панегирика". Они также дают некоторые сведения об учениках Саака Партева и Месропа Маштоца, о формировании армянской литературы и о других вопросах истории Армении 5-го века. Нерсес Шнорали написал просторный комментарий к "Панегирику". Автор использует как символически-аллегорические, так и буквально-словесные методы. Он уделяет особое внимание христологическим вопросам, и эпизодам касающимся сопоставления Нового и Ветхого Завета, используя апокрифы. Нерсес Шнорали также преоложил "Панегирик" на стихи.

Автором комментария к "Панегирику" в "Тонапатчаре" вероятно является Вардан Аревелци (XIII в.), потому что: а. текст в "Тонапатчаре" отредактирован с его стороны, б. в рукописях, имеющих информацию о средневековых переводчиках, комментарий к "Панегирику" упоминается в списке трудах Вардана Аревелци. Этот текст интересен не только с богословской, но и с точки зрения изучения армянской средневековой естествоведческой мысли.

Давид Непобедимый был канонизирован Армянской церковью, как автор богословских и философских работ, особенно как автор "Панегирика Святому Кресту". Тот факт, что "Панегирик" был включен в программу средневековых вузов Армении, присутствие его 'причин' и комментариев, его большое влияние на армянскую средневековую литературу, показывают огромную роль, которую "Панегирик" сыграл в богословской-догматической, литургической и образовательной сферах Армянской действительности.

ARMINE MELKONYAN

ENCOMIUM ON THE THEOLEPTIC HOLY CROSS BY DAVID THE
INVINCIBLE AND ITS COMMENTARIES
(historical and theological analysis)

*Dissertation for the Doctor of History on the specialization of "Theory and
History of Religion (Religion studies)" 25.00.01.*

*The defense of the dissertation will be held on 14 July, 2014, at 14:00, in the session of
Specialized Council 068 on Theology of SQC RA at the Yerevan State University (0025, Abovyan
52, YSU, 6th building).*

SUMMARY

Presented work is devoted to the comprehensive study of the *Encomium on the Theoleptic Holy Cross* by David the Invincible the 5th-6th century Armenian prominent philosopher and theologian, to the historical texts, related to it, its further 'causes' and commentaries. The dissertation consists of Introduction, three Chapters, Conclusions, Bibliography (180 p.) and an Appendix (14 p.).

The first chapter deals with the question connected with life, activity and literary heritage of David; here various sources and studies are compared with a new approach. In the second chapter the history of the creation of the *Encomium* is discussed, a theological analysis is made. In the third chapter the influence of the *Encomium* on the Armenian medieval literature, its 'causes' created in the 12th-13th centuries, commentaries by Nerses Shnorhali the Armenian catholicos (1102-1173) and another one in the *Liber causis* of the Church Feasts (*Tonapatjar*) are presented.

Armenian medieval authors (the author of *Prathesis* of the *Encomium*, Nerses Shnorhali, Vardan Haghbatec'i (12th century), Davit' Q'obayrec'i (1150?-1220), Grigor Abasyan (12th -13th centuries), Kirakos Gandzakec'i (1200-1271), Arak'el Syunec'i (14th - 15th centuries)) testify, that David wrote the *Encomium* by the order of Gyut I Arahezac'i the Catholicos (461-478), against the nestorians penetrated into Armenia. There are common features in the writing period and circumstances of the *History of Armenia* by Movses Khorenac'i (5th century) and the *Encomium*. Around 478 Movses Khorenac'i started to write his *History*, which had a great significance for the struggle of Armenians against Persia. But it was necessary to strengthen positions on the religious-dogmatical side, because nestorians were sponsored by Peros the king of Persia. The Prince of Armenia Sahak Bagratuni ordered Movses Khorenac'i to write the *History* and the spiritual leader the catholicos Gyut ordered David, the coefficient of the last, to write a work defending the confession of the Armenian Church. David possibly finished the *Encomium* when Gyut already passed away and the catholicos of Armenians was Hovhan Mandakuni (478-490). Thus, one can think, that the *Encomium* was created in about 478-482.

The *Encomium* is a philosophical-theological writing. It is dedicated to the Cross, but has a wide range of theological issues: christology, soteriology, ecclesiology,

eschatology, mariology. There are many general ideas and common expressions between the *Encomium* and the *Definitions of philosophy* by David the Invincible. The *Encomium* has the influence of the eastern christian mysticism as well. Moreover, for this writing David has created neologisms, particularly theological terms (e.g. «սսոռուսծսխսս» - the cross of God, «խսսսսսսսսսս» - to be like a cross, «քրիստոսսսսսսսսս» - Christ decorated, «քրիստոսսսսսսսսսս» - Christ crowned, etc., which were widely used in the Armenian literature of subsequent centuries. Armenian medieval authors T'eodoros Q'rt'avor (7th century), Sahak Dzorop'orec'i (catholicos 677-703), Misayel the Bishop (9th century), Zak'aria Dzagec'i (catholicos 855-876), Grigor Narekac'i (10th century), Grigor Magistros Pahlavuni (11th century), Nerses Shnorhali in their works on Cross have used the *Encomium* both in terms of ideology and structure.

There are two different 'causes' of the *Encomium* written by Vardan Haghbatec'i and his student Davit Kobayrec'i. Grigor Abasyan has inserted the *Cause* by Davit Kobayrec'i in his *Book of Causes* clarifying and editing some controversial issues by making his own additions. These *Causes* suggest interesting evidences about the life and activity of David the Invincible, the motivations of the creation of the *Encomium*. They also provide some information concerning the students of Sahak Partev and Mesrop Mashtoc', the beginning of Armenian literature and other issues of the history of Armenia in the 5th century.

Nerses Shnorhali has written an extensive commentary on the *Encomium*. The author applies Church Fathers both of Alexandrian and Antiochian schools, and uses symbolic-allegorical and literal-verbal methods. He pays a special attention on the christological questions, and the episods concerning the juxtaposing of the New and Old Testaments, using apocrypha as well. Furthermore Nerses Shnorhali put the *Encomium* into a verse, which can be considered as an independent composition with its structure, style and artistic value.

The author of the commentary on the *Encomium* in the *Tonapatjar* is probably Vardan Arevelc'i (13th century), because: a. the text is found in the *Tonapatjar* edited by him, b. in the manuscripts having information on medieval interpreters, a commentary on the *Encomium* is mentioned in the list of the writings of Vardan Arevelc'i. This commentary is interesting not only from theological, but from the point of view of studying of Armenian medieval natural scientific thought as well. This text, as well as a part of above mentioned commentary by Nerses Shnorhali, for the first time, are placed in the Appendix of this Dissertation.

David the Invincible was canonized by the Armenian Church as an author of both theological and philosophical works, especially of the *Encomium on the Cross*. The fact that this work was included in the programme of medieval high schools in Armenia, presence of its 'causes' and commentaries, its great influence on the Armenian medieval literature, proves the great role of the *Encomium* in the theological-dogmatical, liturgical and educational aspects of the medieval Armenia.